**Տեղեկացում**

վեճերի արբիտրաժային քննության առանձնահատկությունների վերաբերյալ

Հարգելի Հաճախորդ,

բանկային ոլորտում վեճերի արագ և արդյունավետ քննության նպատակով Բանկը կիրառում է նաև վեճերի արբիտրաժային քննության պրակտիկան:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի համաձայն. «**Արբիտրաժի իրականացման նպատակն է առանց անհարկի ծգձգումների կամ ծախսերի ստանալ անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից վեճերի արդարացի լուծում**»: Այսինքն՝ առևտրային արբիտրաժը դատական, վարչական, հասարակական ձևերից տարբերվող սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ինքնուրույն ձև է: Այն ընդհանուր իրավասության դատարաններից տարբերվում է մի շարք հատկություններով, որոնք հանգում են հետևյալին.

- Արբիտրաժում գործերը քննվում և լուծվում են, եթե առկա է այդ մասին կողմերի համաձայնությունը, ինչը կնքվում է ինչպես առանձին պայմանագրի տեսքով (արբիտրաժային համաձայնագիր), այնպես էլ կարող է ներառվել պայմանագրում (արբիտրաժային վերապահում):
- Կողմերն ազատ են ինքնուրույն որոշել արբիտրաժի անցկացման վայրը:
- Ի տարբերություն պետական դատարանների կողմերն ունեն հնարավորություն ինքնուրույն ընտրելու արբիտրներին և ձևավորելու արբիտրաժային տրիբունալ:
- Արբիտրաժային վարույթի դեպքում գործի քննությունն իրականացվում է տվյալ ոլորտում խոր մասնագիտական գիտելիքներ տիրապետող անձանց կողմից:
- Ի տարբերություն պետական դատարանների, արբիտրաժի դեպքում կողմերն իրավունք ունեն սահմանել կանոններ, որոնց համապատասխան պետք է քննվի գործը, ընտրել գործի քննության ձևը, ինչպես նաև ընտրել կիրառվելիք իրավական նորմերը:
- Արբիտրաժային վճիռը վերջնական է և կարող է դատարանի կողմից չեղյալ ճանաչվել Օրենքով սահմանված սպառիչ հիմքերի պայմաններում: Օրենքով պետական դատարանների միջամտությունը արբիտրաժի գործունեությանը խիստ սահմանափակ է:
- Արբիտրաժային վճիռները ենթակա են ճանաչման և կատարման գրեթե բոլոր պետություններում:
- Արբիտրաժում գործերը քննվում են առավել արագ և գործի դատական քննության համեմատ արբիտրաժն առավել քիչ ծախսատար է: Արբիտրաժում գործերի քննությունը գաղտնի է:

**Հարգանքով,**

**«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ**